ԿՈ. Բնականարար բացայայտեալը պէտք է նախադաս լինի քանի բացայարոփէլ + ինչպէս, Մորդուեն Մովսէս : Աքայն Դաւիթ : Քաղաքան Երուսաղէմ : Բայց երբեմնապէս տեսնում ենք և յետազաս ինչպէս, Արքահամ հոյք մեր : Երուսաղէմ գողակն , և պիտի :

ԿՈ. Երաց և տեղեաց յատուկ անունները նախադաս դնուեալ չեն համաձայնվում բացայայտեալի հետ , այլ իրեւ ածական են վարվում + ինչպէս, Չուեաց Անդրբար զաւառէ : Եկն է Սէօն լեռնէն : Կարօւիմ Սէրէնէլ մրդոյ : Հունն Յորդուեն զեսոյ բաժանեցաւ : Խակ մարդկանց անունը նախադաս ժամանակը համաձայնվում է + ինչպէս, Ողջոյն տուք Տէհիեւայ որդույ սիրեւոյ : Ալովուածութեաց քաղաքէ :

ԿԵ. Յատուկ անունները շատ անզամ բացայայտիչ են լինում անուն բառիւ հանդերձ փոխանակ անուանք , ինչպէս, Այլ մի Մարթիսս անուն : Անցանելը ընդ մհծ գետն կուր անուն : Տայ զջիղրամ ցպատանի ոմն վարութեան :

ԿԶ. Բացայայտիչն թէսպէտ ընդ բացայայտելոյն կարվումէ առանց

շաղկապի, բայց միշտ զօրութեամբ և երբեմն յայտնի ունի այսպէս, ինչ և առեւ բառերը ինչպէս, զսուրն այսպէս զրան Աստուծոյ: Մասուսցուք պատարադ օրհնութեան այսպէս ու պատուի շրթեամց : Խնոր Պատառնեն յիմն առեւ վարդապետէ :

Ալ. Շատ անդամ բացայացուի և բացայացուելոյն մէջ անկանում է այլ մասն բանի ինչպէս, ԶԱՐՈՒՆԵԱԼ բրուժն ինդրեաց զնաբանութեան պատիւթեան : ԱԿԱՐԿԵՎ նմանեցէք Հօք ՆԵՐԱՄ :

Ալ. Երբեմն շատ եղական անունները լինում են բացայացուչ միոյ յոդնականի ինչպէս, ՋԱՂՔԵՆ Սինեաց երկու եղարք՝ Բաբեկն և Բախուր : Ամենայն նիւթ ի չորս տարերց է բաղկացնալ, և հառա, և ջրաց, առայ և է հառաց :

Աթ. Ոչ միայն բառը բառին է լինում բացայացուչ, այլ ամբողջ բանը լինում է բացայացուիչ մի այլ ամբողջ բանի մանաւանդ այս, այս, այն դերանունների մօսու ինչպէս, Ամենայն օրէնք ի մի բան կասապին, և աւելոցն զընկութ ու էբէւ զընկութ ու: Զիմրդ լինիցի այդ՝ ՔԻՆԱԿԱՆԻՆ զի՞մ ակորոցնեան ընդ ընդ առառաջ գաղանէ :

Հ. Երբեմն սպասահռումէ, որ երկու դոյական անուն թուով և հոդվալ համաձայն են միմեանց առանց շաղկապի, բայց բացայացուիչ և բացայացուեալ չեն, այլ խողիր բայի ։ ինչպէս, Տարեալ հանդուցանեն զմարմին Սրբոյն Սահակաց է ՏԵՐԱ է ՀԵ-ՇԱ Աշակաս ( ի Տարօն և ի դիւզն ինդիր Էն ) :

### ՀԱՄԱՉԱՐԵՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՑ

ՀԱ. Երբ որ ածական անունը նախադաս է դոյականին միշտ դնիւում է եղակին անհամաձայն իրան դոյականի հետ նրա նախագիրը ինքն անուելով, ինչպէս, ԱԿԱՐԿԵՎ սպակացն արժանի եղեն: ԺԱՂԱԿԱՆԻԵՄ վշտօքս զանազաններոյ զերանութիւնն ժառանգեացուք: Ա-ԵՐԵՎԱՆ Քաղաքացին հանդիպեցան: Պահանջուր բառուերօքն մոտանեն յառադասան լուսոյ: Բայց միավանկ նախադաս ածականները համաձայնիւում են, ինչպէս, Երկիւզարծութեամբ լուարուք ՍԵՐԱ Աւետարանիս: Հնապանդեցոյց զադարթեաւ հետապնդութեամբ լուարուաւ:

ՀՅ. Ածականը Երբոր յետադաս է դնիւում համաձայնիւում է դոյականի

հետ թուով և հողովով ինչպէս, Առացաք նախառինս յարանց սաշ և անընդհանց : Տիրապահն անընդհանց անհաջող : Ունիս բաղում բարութիւնս ամբուժութեալ յամաց : Բայց եսն և առաջ վերջացեալ ածականները չեն համաձայնվում ինչպէս, Զայս լուեալ գաւթի Առաջանեան : Ընտրեցաւ ի Հոգոյն ի տաճիս Հայութան : Մեծ իշխան տաճն Աքաջան :

ՀԳ. Եթէ ածականի և գոյականի մէջ այլ մասն բանի անկանի կ համաձայնվին միմնաց հետ և նախադիրը կ կրկնուի Երկուսի վրայ + ինչպէս, Տերուականութեան վարեռոջիր Խոբառու : Հովիւ և անդէորդ շնուրութեան հնչեցուցանեն պահանջանք : Բանեած խոցեցին զմել կայեցաւցանութեանք : Զատուառան աւերեցին պահանջանք :

ՀԴ. Եթէ գոյականը ունինայ մի քանի նախադաս ածականներ շաղկապով կապուած նախադիրը ամէն ածականների վրայ և կղնուի , ինչպէս, Վասն մեղաց անկաք է շատուկ և ի բառութեանք կ ինցաղստ : Ի տիրու և յաներու ինդրոյ ծնանին կուրք : Զայրէն և զանձնուկ Լորօր իմոյ տուր ինձ ըլլ նամակ :

ՀԵ. Ածականները եթէ զոյականից յետադասվին նախադիրը կ'զնուի զոյականի վրայ և յետադաս ածականի վրայ + ինչպէս, ՎԱՅ զուարթ և շատու սիրէ Առոտուած : Երթիցին յապէ օտար և առ :

ՀԶ. Ածականները զոյական դերմուանց հետ միշտ համաձայն են դնլում թէ յետադաս և թէ նախադաս . ինչպէս, Վասն իմ մեղանուէն : ինձ կուսակելու : Դոքա յշոքնորք : Փրկչելու մել : Զիբուսակելու զմել փրկեամ ի վը տանդից :

ՀԵ. Երրոր նախադաս զոյականները շատ են և եղական յետադաս ածականը դնլում է յոդնակի + ինչպէս, Ողջոյն տաջիք Պրիմկեայ և Ակիւդիայ հրանտակաց էնց : Առուղ և Յովաթման աբէւլէ + և կուշէլէ + :

ՀԸ. Գոյական ամուռնները շատ անդամ ածականի նշանակութեամբ վարփում են + ինչպէս, Համբաւ բարեաց : Խնդրեցին անօթու արքանեան ( արքաթիս ) : Կիրհէր ի քուն Բանականնեան ( թանձր ) : Որ թափիցէ զմաղք դաստիանեան ( դառն ) :

ՀՅ. Միջակ անուանքս կ, երևո, երեւ, վեց, վեց, եօն, ոտան, երիտառուն, ոտառուն, եօնունուն, հորեւը, երեբեր և եւոն և գիւ վերջացածները—ոմէնեւեւոն, երէսէն և այլն, սովորաբար համաձայնվում են զոյականների հետ թէ նախաղաս և թէ յետաղաս, և ոմանք միայն ըստ ճիշդ կանոնի ածականաց . ինչպէս, Մէու ակամիք : Ի մուշ աւոր : Երիտա ուերանց : Քանիւներիուաց ամաց : Երիտամբ հաղաղատօք : Ամենեցան նախարարաց : Ար աշենեւեւոն որդիս ժողովրդեմն : Երենից ամաց : Երեւ հուշուտ արամբք : Բայց միայն սրանցից երևո, ճինչ, վեց, եօն, ոտն չեն ասվում յողնակի ուղղականումը—երէսու կամ ճինչու կամ վեցու արք, որդիք, և այլն: Այլ երէսու որդիք : Ճինչ արք : Վեց աւորքք : Քաղաքք եօնն : Ամք ոտան : Եղակի վերջահողով չեն վարդաց դոյականների հետ, այլ միայն յողնակին ինչպէս, Ամբում են եօնն աւոր : Տառն աւոր : Եօնից ամաց : Երենից ամաց : Աւորց ոտանից և ոչ թէ վեցու աւոր, եօնն աւոր, ոտան աւոր, և այլն :

Զ. Դաս կամ կարդ ցոյց տուող թուական անունները՝ որպիսի են ոտանին, երեւուր, երեւուր, արարուր, ճինչերուր, վեցերուր և այլն, ըստ լողականների յետաղաս ժամանակը համաձայնվում են զոյականների ճինչու բայց երրեմն նախաղաս ժամանակը ևս վայելչապէս համաձայնվում են. ինչպէս, Յամին ոտաններուրք : Յամնեամն թուականներուրք : Յամեամն երեւուրք : Յարաջնուաց աւոր : Յերբորուաց ժամու զիշերուցն : Ի հուշունուներուրք աւոր, և այլն :

ԶԱ. Միջակ անուններս երեւու, երեւու, արեւու, եօներու, ճինչերու, երեւուրքի շատ սակաւ են յետաղատվում դոյականներին և հասարակորչն նախաղաս իներով վարդում են անհամաձայն . ինչպէս, Երեւու մարմնով : Չըրեւու տարերց : Եօներու զաւակօք : Երեւուրքի վայելչութեամբ : Հասուցոններ զդարձ փոխարինին ոտանուրքին յաւելուածով :

ԶԲ. Զին բնաւ միշտ նախաղաս են վարդում ածական եղած ժամանակը անհամաձայն . ինչպէս, Զին օրինակաւ : Զին դիմօք : Յին պէտա :

ԶԱ. Ին և ին թուականները չեն վարդում խօսքի սկզբումը, այլ միշտ որպիսի և ից բառից յետոյ թէ իր դաշական վարուած և թէ իր ածական և միշտ Ռողղական հողովով . ինչպէս, Աւելորդ էն էր : աշխարհ էն է բնու-

թիւնս : Զիք իւլ ի ծածուկ , բան իւլ ; Չար իւլ արարած , Ոչ իւլ մասն ունին : Ոչ ունէր զլսաւ իւլ :

ԶԴ • ՈՅԼ , մ , մէստ , մ ստ միշտ դոյական են վարվում և սակաւ ուրեք նախաղաս ածական և համաձայն ինչպէս , Յաղազս մշտ պատճառի : ՈՅԼ ստ հովիւ կայցէ հակառակ : ՅՅ ստ ի ձէնջ հայր ինդրիցէ որդի իւր ձուկն : Իսկ մը նախաղաս է վարվում սովորաբար և նոյնակէս համաձայն ինչպէս , Վասն որմէ յուսոյ ամբաստանիմ : ՈՅՆԼ հրով հրոգեհիմ : ՅՅ մը արարչէ երկիր յեպէ : Ընդ որմէ ծառով : ՈՅՐ մը ժողովրդենէ : Վասն որմէ զործոյ : Բայց որին նախաղաս միշտ անհամաձայն է . ինչպէս , ՈՅՒՆ օրինակաւ : ՈՅՒՆ անցք անցանէին , և այլն :

ԶԵ • ՈՅՆ , ստ վարվում են նախաղաս և յետաղաս և միշտ համաձայն իրանց դոյականներին . ինչպէս , ՈՅՆ երիտասարդ : ԱՅՐ ան : Առն առուած : Ծերովք ամուբէ , Կըուով ամուբ : ՈՄԵՆ խաղաղորդի : Նմանապէս իրբու դոյական վարուած համաձայն են պահանջում իրանց նախաղաս ածականը . ինչպէս , Պատուականի ամեւ : Ի չարէ ամեւեւ : Զանվարժմ ամեն :

ԶԶ • Միջակ անուանքս մաս , այլ սովորաբար նախաղաս վարուելով դոյականներին համաձայնվում են նրանց հետ . ինչպէս , իդալ Գաւոյ շարաթուն : Ի միւսում վայրի : Այլամ քահանայի : Այլու օրինակաւ : Նոյնպէս ամէն կամ ամէն միայն յոդնակի վերջահոլովներումը . ինչպէս , ՅԱՆԵՆց անդամոյ : Ա. ՁԵՆԵԿ մասանց :

ԶԷ • Միջակ անունս ամենայն դերանունների հետ միշտ համաձայն է հորովով թէ նախաղաս և թէ յետաղաս . ինչպէս , Ա. յա ամենայն : Ա. յա ամենայնէ : Ա. ՁԵՆԵԿ նոյսա : Բայց անուանց մօտ նախաղաս միշտ անհամաձայն է և յետաղաս հորովով միայն համաձայն ինչպէս , ՅԱՄԵՆԱՅՆ իրաց , Ա. ՁԵՆԵԿ բանք : Ա. ՁԵՆԵԿ չարիք : Արարածոցս ամենայնէ : Լեռնականօքն ամենայնէ + և երբեմն վարվում է ի տեղի ամենեւեւան բառի + ինչպէս , Ա. ՁԵՆԵԿ , որ բնակեալ են զգեստովն : Ա. ՁԵՆԵԿ , որք հրաժարեցան յաշ լսարհէս :

ԶԸ • Խարագանէս , ԵՐԻԱԴԱՆՀԻԱՐ հասարակօրէն նախաղաս վարուելով անհամաձայն են , և սակաւ ուրեք համաձայն , մանաւանդ եթէ այլ մասն բանի անկանի մէջ տեղը . ինչպէս , ՅԵՐԱԳԻՆՀԻԱՐ զործոյ հարցմունք լինելոց են : ՅԵՐԱԳԻՆՀԻԵՐԱՄ ատուր : Խոյս տայ ՅԵՐԱԳԻՆՀԻԵՐԱՅ կողմանց :

Զթ. Ածական դերանուններս այս, այս, այս, թէ նախաղաս թէ յետաղաս բացի եղակի բացառական հոլովէն սովորաբար համաձայնվում են դոյականներին, մանաւանդ եթէ մէջը բայ անկանի, և յետաղաս ժամանակը նախդիրը կրկնվում է երկաւսի վրայ ինչպէս, Այսր աւուր: Այսր շնորհի: Այսոցին տարակուսանաց : Ի կերինն յանուի : Ի տանջանացդ յաշբանե: Խմասութեանն այսոցին : Ես պատկասիմ ի բանեդ յաշբանե : Ի կերինն յանուի զամենայն գիշերս ագամնէր: Այս դերանունների տեղ երբեմն դընվում են առիք, այտէ, անոր, տուր, անոր Մակրայերը . ինչպէս, յաշխարհի առ նեղութիւն ունիցիք: Ցանկամ եւմնել ի մարմնոյ առիք: Մտին առ նոյ ի տասկան անորը :

Դ. Սոյն, դոյն, այս ածական դերանուններս սովորաբար վարվում են նախաղաս համաձայն նախդիրը իրանց վրայ առնելով բացի բացառական հոլովէն, որ չունին. ինչպէս, Նորէն թագաւորի: Սին աւուր: Կոշին չարչարանաց: Նոհենիք պարծանօք: Զնովինիք պատկերօք: Ի վերայ դրբն բանից: Ի այս օրէ: Նմաննապէս այս ինչն, դոյն ինչն, այս ինչն, այս առ, դոյն այտ, այս այն նախաղաս սովորաբար համաձայնվում են. ինչպէս, Նորէն ինքնան հիւանդին: Նմն ինքնան Քրիստոսի: Ի ան իսկ այս ժամու: Ի այս այս լեառն սուրբ:

Դ.Ա. Ածական դերանուններս իմ, առ, այս, մեջ, ներ, եւր բաց ի յոդնակի Ուղղական, Հայցական և Նախդիրիւ տրական հոլովները՝ միշտ համաձայնվում են դոյականների հետ թէ նախաղաս և թէ յետաղաս. ինչպէս, ինչ խասութեան: Խորու Աստուածութեանն: Ի մոի եւրում և ի իւրիւնն: Ի առմէն բարերարութենէդ: Ի Տեսանէ առմէն ընկալցիս դու ըռ վարձն քո: Հալածեցէք յաշխարհէ Արք: Խակ յոդնակի Ուղղականը, Հայցականը և Նախդիրիւ տրականը լինում է—Աւուրք իմ: Զկեանս առ: Ի տունս Ար: Եւ ոչ թէ ենք, այդ, ներս:

Այս դերանունները երբեմն վարուած են ինչպէս յատկացուցիչ, բայց այն ժամանակը պէտքէ համարել սրանց իրրե Սիոնական հոլով է դոյական դերանուններին:

Դ.Բ. Ածական դերանուններս առա, այս, առա, այս, առա, այս Նախաղաս են պարվում վերջահոլովներով համաձայն ինչպէս, Նորայշն ալ-

տից : Գործառն սեսովթեամբ : Ի հորաշեն ճաճանչից : Խակ այն, այն, վերջացածները անհամաձայն . ինչպէս, քային հեղովթեամբ : Զերայն քա չութեամբ :

Այսափ ածական դերանունների վրայ, խակ գոյականները են, ուստի ինչն, և այլն, լինում են անուն Բայե, Խնդրի Բայե, Յարկայուցիւ, և այլն :

ՈՐ ՑԱՐԱԲԵՐԵԱԼ ԴԵՐԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ

Ղ.Գ. Այս դերանունը յարաբերում է ոչ միայն իրանից առաջ զրուած բառը, այլ և բանը և սովորաբար նրանից յետոյ գնուելով թուով համաձայնվում է, խակ հոլովով ոչ ամենայն ժամանակ, որովհետեւ առաւել հետեւմ է բայի պահանջմանը . ինչպէս, Ես, որ հաստատունս դիտեմ : Մատն վասն սրբովթեան քո պատուաբար, զբ հրամայեաց Մալես : Վեց օր է, յօք արժան է զործել : Զարչարեցաւ եմուսու, որով կենդանացաք : Մարդ միայն անհնալանդ եղեալ ամբարշտեցաւ առ օրինս Աստուծոյ, ոչ և դարձավարտեցաւ :

Ղ.Դ. Որ շատ անգամ վալսվում է նախադաս անորիշ գէմքով, բայց այս տեղ չէ յարաբերական, այլ իրրի միջակ անոն . ինչպէս, Որ ունի հարսն, նա է փեսայ : Որ համբերեսցի խապառ նա կեցցէ : Փոխանակ ամերոյ ( ով որ ունի, ով որ համբերէ ) :

Ղ.Ե. Յարաբերական դերանունն որ շատ անգամ զօրութեամբ ունենալով իրան յարաբէր՝ լին դնվում է նոյն հոլովով, որով պէտք է դնուեր յարբերեալը . ինչպէս, Երամի որոց ոչ իցէ տեսեալ և հաւասարցին ( այն է՝ երամի նոցա, որպաց ոչ իցէ տեսեալ ) : Դուք երկիրապատնէք, որուած ոչն գիտէք, մերք երկիրապատնէմք, որուած գիտեմքն ( լիման այնմ, զոր ) : Դու ոչ մտանես, և զբա մտանեն արդելուս ( զնոսա, որք մտանեն ) : Եւ սրա հակառակ շատ անգամ յարաբերեալն դնումէ յայտնի, խակ յարաբերականը լուենայն, ինչպէս, Առ ի քէն իմաստովթիւնդ : Անցաւորք են և թագաւորքն և ի նոցանէ սպառնալիք : Առ ի քէն փառօքն : ( իմաստովթիւնդ, որ առ ի քէն է . սպառնալիքն, որք ի նոցանէ են : Փառօքն, որ առ ի քէն ) :

Ղ.Զ. Յարաբերող դերանունը երբեմն լինում է յարկայուցիւ երրիմն Եւն-

Եթէ նախաղբութեան առաջ դնուելով և նախադիրը իւր վրայ առնելով կամ  
երկուսի վրայ ևս կրկնուելով, ինչպէս, Զորո զամունն լսել քաղցրէ : Զո-  
րո մենք դիտենք դհայր և զմայր : Գտանէք յաւանակ մի, յորոց վերայ ոչ  
ոք ի մարդկանէ նատաւ : Զորո զիլորձ առին չեթանոսք :

Ս. Դ. Ն. ԴԻՄՈՐՈՅ ՅՈՒԵՐԻ Վ.ԲԱՑ

Դէս Այս յօդերը Հայերէն վայելավսօսութեան համար շատ կարևոր  
են, որովհետև դնուելով բառերի ծայրումը երեք տեսակ դերանուան  
միտք են ցոյց տալի և մասնաւորում են կամ որոշում բառերի նշանակու-  
թիւնը, ինչպէս, Խմ կամքս ի քո ճշմարիտ ճանապարհիտ սէլոնէ : Այս  
տեղ որոշած են չունեց, ճանապարհը և ուրիշ, իսկ ինչտեղ բանը կամ խօսքը  
անորիշ միտք ունի, այն տեղ չէ հարկաւոր գիմորոց յօդ դնելո ինչպէս,  
թագաւոր, որ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր՝ ոչ կարէ վայելուչ  
դուլ: Գինի ուրախ առնէ, իսկ զուարթ և հաց հաստատէ զսիտ մարդոյ:  
( Այս տեղ ամենայն ինչ անորոշէ ) :

Դըս Խակասէն հասարակ զոյական անունը միայն կարող է դիմորոց  
յօդ առնուլ, իսկ յասուկ անունները և յատկացուցիչ ունեցող հասարակ-  
ները, որոնց նշանակութիւնը որոշած է՝ պէտք է ամյօդ վարին, ինչպէս,  
Կոչեաց Տէր Աստուած զԱղամ: Թափօր և Հերմոն յանուն քո ցնծասցեն:  
Բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ: Պտուղ պատե-  
րազմաց մահէ, և այն:

Բայց շատ անգամ տեսնում ենք յօդաւոր ևս դրուած, ինչպէս, Ո՞վ էր  
Պաւուս: Հարցանէր թէ ուր ծնանիցի Քրիստոս: Յքահանայալքեւոսն և  
ցիշանս տաճարին և ցծերսն հարցանէր: Զհայն զառաջաւորութեան ե-  
լիքր :

Այսպէս ուրեմն ոչ միայն անունները, այլ և գերանուններից շատերը,  
Բայց բայց բայց անունները և Մակրայներից ոմանք ըստ վայելչաթեան  
տեղւոյն անում են զիմորոշական յօդեր, ինչպէս, Զոր դուդ առնես:  
Մինչ առ ձեզ եմ: Որ լնդ նմայն հաւանեալ էին: Զոր գործեմ: ոչ  
զիսեմ: Զդիտեմ զինչ խօսիս: Որ ուսէն: Որ բժշկէն: Ես  
որ կապեալ: Որ երեմն օտոքացեալքը՛վիք և ի խօսելն ձեմ և Ոմանք

ի սոցանել, որ աստի կան: Յարեւան, որ յառաջն ասաց: Բայց զիմբուդ այժմ մըր տևանմէ: ոչ զիտեմք: Որ ոչն աւետարաննէն զաւետարանն նորան մենաշեն: Այս մոտպիր ընթերցանութեամբ կարելի է յաջողակապէս ուսանել քան թէ երկար աւանդած կանոններով:



ՈՒՂԴԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱԿԱՐԱՆՈՐ ՄԱՍՆԷ, ԱՊԱՆԾ ՈՒՐՈՅ ԲԱՆՆ ՉԱՌ ԱՆՊԱՄ ԹԵՐԻ, ԱՆԱՊՈւԵԱՄ և ԱՆԽՄԱՆԱԼԻ է ՑԱՌՈՄ: ՈՒՂԴԱՊՐՈՒԹԻՒՆՆ ԿԱՐԵԼԻ է ՈՒՍԱՆԻԼ ԱՊԱՆԵԼ ԳՐՈՒ ՎԱՐԺՈՒԹԵԱՄԲ և ՈՒՂԻԼ ԱՐՈՒԱՐԵՐՈՒԹԵԱՄԲ Քան թէ աւանդեալ կանոններով, բայց մանուկ ուսանողաց դիւրութեան համար՝ դում ենք ուղղաղրութեան համառօտ կանոններ Առագանութեան և Տրոհութեան նշանների վրայ:

Ինչպէս մէկ բանը քաղցրակարուր և պատկանաւոր ձայնով կարդալու համար հարկաւոր է ամենայն հնչմունքները նշանակեալ տեղումը հնչել, նոյնպէս բառերը կամ բանը օրինար որոշելու և գրութեան և լոյթերց ման ժամանակ խմասնները պատշաճ հասկանալու և հասկացնելու համար՝ հարկաւոր է Տրոհութեան նշանները իւրաքանչիւրն իրան տեղը գործածել:

Առղանութեան կամ պատկանաւոր արտասամութեան նշանները սուքա են—ԵԵՂՄ (՝), ԵՐԿԱՐ (՝), ՊԱՐՄԵԿ (՞), ԽԱԼ Տրոհութեան կամ բառից և խմասնից բաժանման նշանները սոքա են—ԵՆԹԱՋԱԿ (՝), ՄԱԼԿԱԿԵՄ (՝), ԲԱՐՁ (՝), ՍՈՊՐԱԿԵՄ (՝), ՄԻջակէմ (՞), ՎԵՐջակէմ (։), ՓԱԼԿԱՊԻԾ (՝), ՓԱԼԿԱՊԻԾ (՝), ԱԿԵՐՄ (՝) և ԶԱԿԵՐՄ (՝՝՝, :):

ՇԵՄԸ (՝) գործ է ածվում հրամայական բայերի, մի քանի մակրայների, կոչական բառերի և միաղէմ բայերի վրայ ինչպէս, Աիրեա, արա, լուարուք, տես: Արի, կաց մանուկ դու: Մի տար, մի առներ, մի հայիր: Ահա, ահմաւափիկ, ահմաւագիկ: Ասուսմծ իմ: Պիտանի է, արժմն է, և այն:

ԵՐԵՎԵ (՝) վալվում է այն ձայնարկութեանց և անուանց մէջ, որոնցում բանը երկարուում է: ինչպէս, Բարէ, ոհ Կարի է առասպելու, աւան բախտին, Երուսաղէմ, Երուսաղէմ, և այն:

ՊԵՐԵՎԵ (՝) գործ է ածվում հարցական բառերի վրայ ինչպէս, Զի, քա-

Նի՞, որչափ, եթ վասն, դի՞ ասես, հասնալ իցես, միթէ դու մեծ ինչ ոք  
իցես, և այլն :

Ենթամտումն (-) վարկում է այն տեղ, ինչ տեղ մի բառ կիսատուելով տո-  
ղադարձ է լինում: Եթէ երկու ձայնաւոր կամ բաղաձայն են՝ մինն այս  
կողմն է մնում միւսն անցանում: Եթէ ձայնաւոր և բաղաձայն են, առա-  
ջինն մնում է և երկրորդն անցանում: Խակեթէ բարդ բառեր են՝ կապող  
յօդը մնում է միւսն անցանում և շատ անդամ ը տառը բաղաձայների մէջ  
դնվում է ըստ յարմարութեան: Ինչպէս, Ա-րե, ի-մաստ, ա-զանի, հի-  
ւանդ, ու-րա-խա-րար, պայ-ծառ, աշ-խարհ, ան-շնորհ, ան-մոռութիւն,  
արր-տում, եր-կըրպագու, ըդ-դլուխ:

Մահականութը (') դնվում է նախորդի և առաջի վրայ, երբ որ հարկաւոր է  
լինում վերջնա վասիսկ հնչելու ինչպէս, 'ի վասս, 'ի Սահակայ, 'ի հօրէ,  
Խարայէլ', Երտուազ' էմ, Պղ'աստն, և այլն:

Բառենքն ('') վարկում է այն ժամանակ՝ երբ որ հարկաւոր է լինում առողա-  
նութեան համար բառն բարից զատանել, որ խառնակ խմաստ չձնանուի:

Սորութեան (,) բաժանում է երկու անկատար բանը միմեանցից, որով  
խմաստը փոքր ինչ կախ է մնում և պահանջում է յաջորդ խմաստի հետ  
կպէիլ: Սորուակէտի տեղը երբեմսապէս դնվում է բութ:

Սէլլականութը (+) դնվում է այն տեղ՝ ինչ տեղ խմաստը կատարեալ է, բայց  
պահանջում է մի այլ նման բան խօսքի բովանդակութիւնը լրացնելու  
համար:

Վերջութեան (:) կամ աւարտակէտը դնվում է ամբողջ բանը աւարտուե-  
լուց յետոյ (1):

(1) Հարկաւոր ենք համարում ասել, որ մեր ժամանակներումս կէտա-  
ղըրութեան կամ Տրոհութեան կամոններն բոլորովի ին այլատարազ են նախ-  
նեաց գործածած կամոններից և համարեա շառերը անխորարար գործ  
են ածում Սորուակէտը Միջակէտի տեղ, Միջակէտը Վերջակէտի տեղ  
նմանապէս և այլ կէտերը միմեանց տեղ, կամ հետևում են օտար լնդուների  
կէտադրութեանց կամոններին, ուստի և մինք մանկանցը կէտադրաթեան  
մի համառօտ դարափար տալու համար միայն դրեցինք այս կամոններն  
յուսաղով, որ առաւել հմուտ հասկացաղները այս մասին ընդարձակ տեղե-

Օրինակներ—Մահամարդոյ հանգիստ է : Հիւանդայեալ՝ և մի ակնկալցին անանալոյ : Ալիք՝ խմաստովիիւն մարզոյ են, և հասակ ծերութեան՝ կեանք անարատք : Բոլոր մարմնոյոյ հողի է կենդանութիւն, խակ մարմնոյ և հոգուոյ՝ միտոք են կառավար՝ և որպէս առ մի մարդ, այսպէս առ բոլոր աշխարհոն : Որ իրբե գհանդերձ կարծէր ունել մեղ գքրիստոնէութիւնն, արդ իրբե զգոյն ի մարմնոյ չկարէ շրջել . թերես և ոչ այլ կարասցէ մինչեւ ի կատարած :

Ստորակէտով (,) բաժանվում են յարաբերելին և յարաբերականն, նոյնակարգ անշաղկապ բառերը, մանաւանդ այնպիսիքը, որոնք ածականով, յատկացուցով, խնդիրով կամ բայով զանազանվում են, նոյնպէս և կոչական անունները + ինչպէս, Ամբաստան լինիս զքաղցր տեսաննեն, որ ոչ ունի արգարացուցանել զնա : Ե՞րբ ուսանիցիք զքաղմտթիւ անուանս Աստոծոցն, յորոց չիք իմիջնէ և ոչ մի : Երբե գիրեշտուկս սքանչելիք էին ամեննեցուն, սներկիստ ի վրաց և ի տառասպանաց, մարդասէրք և ինաւամիչք : Ո՞վ մեկնեսցէ զմեղ ի սիրյն Քրիստոսի, նեղութիւն, թէ վիշտք, թէ սուր : Արքայ քաջ, մեք ի դեմք խոլ զիտեմք : Ո՞չ պարտ, եղբարք իմ, այսմ այսպէս լինել : Կուարուք ինձ, եղբարք իմ սիրելիք :

Միջակէտն (+) վարլում է նա և այն տեղ, ուր յառաջ է բերվում այլոյ խօսք, որ և սկսանվում է զլիսազրով + ինչպէս, Ստիպէր զնոսա և ասէք + թող դրեմ և ցուցանեմ մնձ թաղաւորին : Ի դէպ խոկ և լամէ բան մարդարեին ի վերայ նոցա Այր, ասէ, առ քաղցի իւրում շրջեսցի և կերիցէ ըդ կէս անձին իւրոյ :

Միջակէտը վարլում է ևս և կրճատ բառերի մօտ, ինչպէս Ա. Մակ. Գլ. Ե : Ուկերք մի Մատթ:

Զանգը (‘‘-, ,) վարլում է մի այլ տեղից խօսակցութեան մէջ յառաջ բերած օրինակի կամ վկացութեան սկզբումը և վերջումը + ինչպէս,

կոթիւններ զրեն, որով և աշխարհիկ բարբառներով դրուած կէտաղրական պէսպէս աղաւալութիւններին վախճան տան :

‘‘Յոյժ իսկ տրամեալ էր թագաւորն ընդ աւերել պահակին՝, զոր ի բազում ժամանակաց հազիւ ուրեմն կարացին շինել, որում և չե՞ր իսկ ավնկալութիւն շինութեան, , :

Փափառք ( ) վարվում է այն տեղ, ինչ տեղ հարկաւոր է լինում ամփոփել միջանկեալ և մեկնալ բառ ինչ կամ հասուած կամ մի օտար խօսք որպէս են անուն զրոյ կամ մատենազրի և կամ թուահամար + ինչպէս, թէպէտ և իդործ արուեստին զբաղեալ էին, և դիտէք իսկ թէ զիարդ քաղցր և պատիր ձկնորսութիւն էր, սակայն ոչ դանդաղեցան։ Այս տեղ չէ- ուիւ էու նե զետուր + առարկ և պարէր հնարքուաթիւնն էր կարելի էր վակագծիւ ամ- փոփել։ Ճաշակել անսոի (ի խորսոկաց)։

Ուշադինը (—) զործ է ածվում այն ժամանակ՝ երբ որ ի դիմաց այլոց այլ և այլ խօսք ենք ստեղծանում զրուցասարարար՝ կամ նորերումս ա- ռաւել զործ է ածվում մեկնական միտք ցոյց տուող տեղերումը այս բա- ռերի վիխանակ՝ այսինքն, այն ե, ինձ, և այն։

Որպէս յասուկ, սրբազն և մեծարոյ հասարակ անուններն, տիստո- սական բառերն, նոյնպէս և ամենայն վերջակէտերից յետոյ սկսած բա- նըն, սկզբնաստաներն ունենում են զլխատառ, ինչպէս, Աղամ, Հայկ Մով- սէս, Այլարատ, Յիսուս, Սուրբ Գիրք, և այն։ Լուր, որդեմկ, Խրասու հօր քո։ Լուր դու ինձ, իշխանող, և այն։

Ա Ե Ր Զ .



# ՅՈՐԴՈՐԱԿԱՆ ԽՕՍՔ

Ա.Ռ. ՀԱՅԿԱԾՈՒՆ ՄԱՆԿՈՒՆՑ

ԶԵՂԵՐ առաջ՝ յեզ՝ Հուշաց նորահաս Երիտասարդիւն՝ յեր առաջին մէռնէր, յեր առևէն ըսրբան, առաջ լուս սպառեցիւն, յեր լուսուն, յեր հաստոք ըստիւ բռնէցեց (1) :

ԱԵԲԻ ԱՅՅ գարումն, այս մոտաւոր և հոգեսոր սթափութեան ժամանակումը, մինչ գեռ խորհրդածութիւններ են լինում մեր ազգի յառաջ խստացութեան և լուսաւորութեան մասին՝ բոլոր բարեմիտ հայրենակիցների յօյմն ձեղ վերայ է, Հայկաղուն մանկունք, որ ծիփ, ծաղկիք և այն պտուղն տաք մեր աղջին և հայրենեացը, որին փափաքումէ մեծաւ կարութիւ դարաւոր ժամանակիներից հետէ : Գնուք պէտք է բռնէք աղքային վերանորոգութեան անսպարէդնո ձեղ համար են յդանում Հայ բարի սրտերը բարի խորհուրդներով ։ ձեր բարերաստիք ապագայի վերայ են ուղղուած բոլոր կանխառես հայեցուածքներն և թաղ ձեր բարեյյոյ սնտոնին և ամառատ ու շագրութեանը նուրիլուին իմ յորդորական մի քանի խօսքերս, իրը յայտնող համառօտ քերականութեանը ձեռնարկութեան նպատակին :

Խմացէք, Հայկաղուն մանկունք, որ վերին ամենաբարի հայսախնակութիւնը՝ բաւական համարելով տառապանաց, հալածանաց և գերութեանց այն քամած բաժակներն, որոնք արեան արտասունքներով և աղէիսարշ հառաջանքներով ծծել են մեր նախորդներն, ծաղումէ մեղ համար մի լայնածաւալ լոյս, լուսաւորում է մեր անցեան և ապագայն, տոփազում է խռադնենին աչքերով խոյդ և խնդիր լինի մեր նախնեաց մանրամաղ փոշիների մէջ, հեկիկանքներով և հայրակորոյս ու փառազորիկ որդւոյ արտասունքներով շըջիլ նրանց մանեկած նուրական տեղերումը, տեսնել նրանց փառաց տիտոր յիշառակարաններն, որոնկ նրանց զրաւոր մատցորդներն՝ առնուլ մեր ձեռքն համբռւրել և մեր արտասունքներն նրանց փոշիների մէջ ցողերով փափկացնել, շունչ փչել նրանց և շունչ ծծել նըրանցից և սուանալ մի աղջային կենդանութիւն :

(1) Ա.Բ. Ա. Ա. Հայաստան :

Անցան և անցնում են աքսորանաց, սառնահողութիւնն և անտարրերութեան գժուարասուար օրերն, Հայկագին՝ մանկունք, այն ինչ մեր խեղճ նախորդներն տարութերութեանվ բռնութեանց և քառականան ազդակործան խորամանկութեանց մէջ՝ չէին կարողանում մեր մայրենի լոգոն սկաշտել և անմոռաց պահել:

Անցան և անցնում են այն անմոտադիր օրերն, այն ինչ պանդխոռոթեան և օտարութեան վարմներումը փաթութուած, օտար լոգուներին ու սովորութիւններին անձնանուեր և անձնանում եղած՝ չէինք կարողանում կամ չէինք զգում մեր սեփականը մշակել և ծաղկեցնել: Այժմ դիպուած են ահա մեր ականջներին ՀԱՅՐԵՆԵՐԻ, ԱԶԳ, ԱԶԳԱՅԻՆ ԿՐՈՆ և ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒ խանդակաթ և զարթուցիչ բառերն, և դրդում են մեզ մըտածել անցեալ ու ապագայ, բաղդատել հին ու նոր և մի գեղեցիկ առաքինութեամբ աղջաշինութեան հանդէս բանալ:

Զգում ենք, որ մեր աղջային լոգուն մշակելով և մեր պանդխոռացած ու օտարացած եղայրների համար առ հասարակ մասն ու բաժին շինելով կարող ենք հասկանալ մեր նախնեաց լուս շիրիմների, անմահ յիշառակարանների, արձանապրութիւնների և արեան քրտինքուի աշխասասիրուծ դրասոր վաստակների ձայնն ու զօրութիւնն և նրանով ազգել նրանց դարաւոր գերեզմանների սրտումը մեր հասաչանքը, մեր որոնական ձայնի դռչիններն, մեր սրտի խորոց որդիական զերմանքներն, մեր կենդանութեան աւետիքը և վերանորոգութեան եռանդն: Աղջային լեզուաւու միայն կարող ենք ընթերցասիրել մեր երանելի հախնեաց ոսկեդինիկ գրիչների թարգմանութիւններն և մեր քրիստոնէութեան աղբիւր Սուրբ Գրքի երանական ընթերցուածներն:

Այս մայրենի լոգուն, մայրենի բարբառն, նորահան Հայկադունք, այժմ բանախօսութեան առարկայ է դարձած և ճիշն է թափաւմ իրան մոսացութեան դամբաններիցն խըստուիլ, իրան ազաւազութեան կապանքներն, իրան սորկութեան և գերութեան երիդներն և իրան օտարականութեամբ ծածկուած փաթութանքներն խզել ի բաց ձգել և հասարակաց դառնալ իրան որդիքների համար: Հերկայումս օրագիր ու ամսագիր, լրագիր և այլ աշխատասիրութիւնք բոլորն աղաղակում են և ձայն են տալի՛ գոնեան պատեհան հայ մանկութեան բերանի թոթովանքը մայրենի լոգուաւ բանալ և

մատաղ սիրուը ազգային կլօնի ծաւալմամբ դարդացնել։ Զեղ վլայ են ուրեմն, ազգային վերանորոգութեան յայսերն և պարծմանքներն, նորահաս Հայկազննեք, անյածներն արդէն անցել են և ներկայիս գտնուածներն հազիւ կարողանում են միայն կտուկ աւանդել ի ժառանգութիւն Հայոթեան։ Այսպէս պատրաստեցէք ձեզ հայրենեաց ճշնարկուս կտուկ լինելու համար, որ հայրենիքը, ազգայնութեան սուրբ անունը ձեզ անուիլ չամաչի ազգերի կարգումը, ինչպէս քանի տարիններից ենա և այժմ ամաչում եր և ամաշում է իրան որդիքների մէջ մուռացած և անշքայցած տեսներով իրանց լեզոն և վարք ու բարքը։ Դուք մի յուսահատիք՝ թէ չէք կարող մի փառաւոր ազդ կազմելու նկատելով՝ որ հալածանաց և գերութեանց մրցկայոց ծավի ալիքներն ձեզ ցիրու ցան են արել հեռաւոր աշխարհներ։ Մի յուսահատիք՝ որ մեր հայրենակիցներից ամանք բաժանուել են մեղանից, ումանք մուռացնեն իրանց ազգայնութեան յատկանիշներն և ումանք տղիսութեան մէջ են թարթափում։

Այս ամեն ազգային ծախորդութիւններին շուտով դեղ ու դարման կլինին, եթէ դուք ազօթէք և գուն զործէք զարդանալ ձեր ազգային քրիստոնէական անարատ կրօնի և լեզուի հիմանց վլայ։ Ամենայն յուսահատութիւնի բաց թուած դուք մտածեցէք միանդամայն, որ մենք ազդ ենք, ունենալով մի ենոյն ծագումն, մի ենոյն կրօնը, մի ենոյն լեզոն, մի ենոյն օրէնքներն, մի ենոյն վարք ու բարքն, մի ենոյն վարքն ու թշուառութիւններն, մի ենոյն յոյսերն, եթէ ոչ բավանդակապէս, զննեած մնծ մասամբ, որոնք բաւական են, որ համակրութիւն զարթուցանեն մնր մէջ միմէանց հնտ միանալու, միմնանց սիրելու, միմնանց վառացն ցանկալու և միմնանց համար մեր անձն զո՞ն մատուցանելու։ Մատած ցէք, որ մենք ազդ ենք և ունեցել ենք մեր հայրենեաց մէջ մեր վառքը, այն է մեծանուն թագաւորներ, դիւցազուն նախապալներ, հայրենեաց նահասակներ և ճշշմարդ զաւակներ, սպատմարանական արժանայիշատակ դործքեր, օգտակար օրինադրութիւններ, մնծանամբաւ քաղաքներ, քաջութեան, քաղակրթութեան, դիտութեանց ու արուեստից մէջ անուանի և հոչակաւոր մարդիկներ, վերջ ամենայնի, ընտթիւնից պարզեած ազգային յատկանիշներ, զծաղիկներ և ուրիշ կատարելութիւններ, որոնց յիշատակն միայն կարող է շարժել մեր որտի խորութիւնը և արխական ողին՝ նորողելու մեր

աղջայնութեան փառքը և իրեւ անմոռաց երախտագիտութեան արձան  
մեր նախահարց սիրալի և միանդամայն տիրապի շիրմների վլայ կանդ-  
նելու : Բայց քաջ իմացէք, որ այս մոտածմունքներն և ազգային փառաց  
վերանորոգութիւնը ևս կարող էն դարթնիլ և վերականդնիլ մեր մայրենի  
Եկեղեցւոյ և իրարի ձեռամբ և հայրենեաց անձկայրեաց սիրով : Ասան զի  
Եկեղեցւոյ մէջ միայն, իրեւ նոյեան տասպանի մէջ, աշխարհասասան բըռ-  
նութեանց և նենդութեամց ջրհեղեղից ազատուած զոյդ զոյդ ամփափուած Հն  
մեացել մեր կենդանութեան արմատներն—ալյասուալյան թիւնն ընդ խարս-  
դասիրութեան, ծեսէրն և արարողութիւններն ընդ ջերմնուանդութեանց, առ  
գասիրութիւնն ընդ ներողամուութեան, հալածամայ և նահատակութեանց  
յիշառակներն ընդ տօնմբաթեանու ամսման մրցանակաց և ի պսակ ամենից  
ասուուածիրութիւնն ընդ մարդասիրութեան: Նեղուն է նոյնալէս մեր աղ-  
զի միութեան կատերից մինն, նա է մեր մոտաւոր ճախութեան և բանակա-  
նութեան արգասիքների դանձարամն: Նրանում պահապանուել են մեր ազդի  
զրաւոր զինութեան և հանձարոյ մնացորդներն և նրանով միայն կարող ենք  
մեր ազգային բնասուր խացականութեան պատուներն հանդէս բերել  
հասարակաց սեղմանի վլայ: Կակ հայրենասիրութեան համար այլ ևս բնչ  
ասենք, որ իրեւ մի աղնուական հուր և սքանչելի սէր, իրեւ մի ազդի ըզ  
դացմունքների կապ՝ պատշաճէ թէ հարուստին թէ ուսումնականին, թէ  
արուեստագրին, թէ փոքրին և թէ միծին, թէ թշուառութեան ժամանակ  
և թէ բարեբաղդութեան: Հարկաւոր է, ասում ենք, թէ Ասպանացոյ  
գետնափոր բնակարանի մէջ և թէ թադաւորաց ոսկիսապատ և մարմարոնեաց  
պալատների մէջ, թէ Սահառայի ամայի անսպատներումը և թէ Այրա-  
րատայ ամենածաղկի դաշտերումը :

Ուրեմն մեր ազգային շինութեան նուիրական աւաճարի հաստատոն  
սիմններն են մեր կրօնի ծաւաբանն մեր սրտերի մէջ, մեր լըզուի ազգովին  
գործածութիւնը և ծաւալումն դիւրին եղանակաւ և հայրենասիրական ըզ  
դացմանց զարթուցումն մեր բողոք հայրենազուրկ և տարապիր եղած աղ-  
զակցաց մէջ :

Քաղցր էր մեզ նորահատ հայկազունք, ընդարձակօրէն խօսել ազգաշինու-  
թեան այս երեք ամենակարեսոր սկզբունքների և կաստածի վրայ: Քաղ-  
ցր էր մեղ սոսանց հեռաւոր հայեցուածներին նոյն իսկ մեր նախահարց

կեանքովլից ցոյց առաջ թէ սրչափ սքամնշելիքներ են դործուել մեր աղի մէջ աղասի կրօնասիրութեան և ճշմարիսա հայրենասիրութեան ձեռքով թէ պատերազմի և թէ խաղաղութեան ժամանակ : Քաղցր էր մեզ երկարուեն պատմել թէ բնչաղիսի առաքելամման Հայրապետներ, հոյակապիթակաւորներ զիւցագումն նախարարներ, առաքինի նահատակներ և մարտիրումներ է յառաջ բերել մեր առաքելական մայր Նկեղեցին աղջի աղասութեան և յարատեռթեան համար, երբոր իրան քրիստոնէական կրօնի երկնաշունչ վարդապետութիւններով զտել և մաքելէ հայրենասիրութեան երկրաւոր մասունքներն և իրան քարերար թերելը տարածել նրա վրայ: Քաղցր էր մեզ արդէն իսկ աղջել և տապաւորել ձեր մասազ սրափ մէջ թէ բնչ բարիքներ, բնչ հրաշքներ կարող են առաջ զալ երնչ երանակտ ապաղայ կարողէ պատրաստուիլ մեր աղատաշունչ կրօնի հոգեպարար ջերմնուանդութեան և հայրենասիրութեան ծաւալմաք . բայց այլում բարիքատեհ տեղոյ և ժամանակի թողով այս ամենը՝ բաւական ենք համարում և առ այժմ ասել՝ թէ այս ես մի ամենամեծ և կենդանի սքամնշելիք է մեր կրօնի և հայրենասիրութեան ձևոքով արած, որ այսքան դարերից յետոյ, հազարաւոր աղջերի անկմանից և անյայտութիւնից յետոյ, մմնք՝ հալածանաց արհաւայրների և փոթորկինների միջով անցանելով՝ կենդանի ենք տակալին՝ աղջի անուն կրելու, և մասնաւորում ենք այստեղ մեր խօսքը իրեն քերականութեան առարկայ՝ միայն աղջային լեզուի վրայ :

Մեր աղջային իւղուն, որ մեր աղջայնութեան յատկանիշներից և միութեան կապերից մինչ է և մեր ժամանակումն բանախօսութեան տառեկայ է դարձած, բաժաննում է երկու զլիսաւոր ճիւղն—Գրաբառ, որոյ մէջ մնացել են մեր նախնաց գրուածքներն և չնաշխարհիկ վաստակներն, մեր կրօնական և պատմական կենաց նկարագիրը, —և Աշխարհաբառ, որ հարիւրաւոր դաւառական փոփոխութիւններ և այլատարազ ձևեր ընդունելով՝ շատ տեղ համարեամ մի օտարական նոր բարբառ է ձևացնում՝ անհասկանալի նոյն իսկ հայախօսների համար : Առաջինն ունի իրան նրբութիւններն, իրան ճարտարապետական ձևերն, իրան ողորկուած և կոկուած եւմէ չնելուն, իրան քաղցրակար հնչուունքներն, իրան աղջու և համոզակիք դարձուածներն, իրան կանոնաւոր և սահմանեալ օրինքներն, միով բանիւ այն սամհնայն յատկութիւններն, որոնք սեփական են կատարելադու-

թեան հասած մի լեզուի, բայց ցաւալի յոյժ, որ ոչ հասարակաց հասկանալի : Երկրորդը ունի իրան այլատապարութիւնը, իրան օտարախորթ ճոխութիւնը, իրան անձնակերպ հնչմունքներն, տեղ տեղ իրան այլանդակութիւնը, բայց իրաքանչիւր տեղական գաւառին հասկանալի :

Այսպէս առաջնակէս մեր մայրենի լեզուն, նոյնպէս և մեր ազգի բանակերների կարծիքներն երկաւ են բաժանուած և խմբան մէջ են : Լեզուի կարերութիւնը խմանարով մեր ազգային լուսաւորութեան մատին՝ ոմանք ցանկանում են զրարարն արծածել հնորա վլայ առաջ դնալ և ոմանք պնդում են աշխարհաբառն միայն գործ դնել : Բայց անշառ և անկրանակի գատելով երկուան ևս հարկաւոր են, ինչպէս մինչև ցայսօր հարկաւոր են եղել : Գրարառն հարկաւոր է մեր մատենալրական ճոխութիւններն հասկանալու, մեր անցած ու գնացած կեանքի նկարագիրներն և ազգային բարելաւութեան համար ընորած ճանապարհներն վերաբնելու, իվեր քան զամեայն մեր եկեղեցական աստուածաշունչ ընթերցուածներն, հոգեբռուի աղօթիքներն, քարոզներն, ճառերն, երգելն և շարականներն հասկանալու, իսկ աշխարհիկ բարբառն հարկաւորէ մեր մոքերը այժմ դիւրաւ միմնանց հաղորդելու, մեր ընտանեկան խօսակցութիւններն հայացներու, և մեր այլ և այլ բանաւոր պիտոյքներն հոգալու : Երկաւմն ևս միանդամայն շատ հարկաւոր են մեզ և առ հասարակ մեր բոլոր բարեխոր բանասէր հայրենակիցների փոյթն և եռանդն այն է՝ որ աշխարհիկ բարբառներով զրուած քններ յառաջացնելով՝ ընտիր բառեր և գարձուածներ մոռացութեան մթութիւնից լոյս աշխարհք բերեն և գրաբառն ճոխացնեն : Գրաբառ լեզուի դրուածքներն արածարծելով աշխարհաբառի խառն ի խուռն և օտարահնչիւն բառերն վերջացնեն և զրաբառ լեզուի գեղեցիկ ու լիտիր բառելովն նրան մի զանականական տղոլութիւն տան և շնորհ լնդհանուր հայ հասարակութեան լիզու և ոչ թէ թողնեն օտարախառն այլանդակութեան մէջ, որ մի զաւարի լեզուաւ զրուածքն միւն չհասկանայ և հայը թարգմանչի կարօտի իրան հայ արևնակցի հևտ խօսելու ժամանակի : Այս ընթացքը և ուղղութիւնը լիզուի վերանորութեան մասին շարունակվում է մեր ազգի մէջ և կշարունակուի բառական ժամանակի, մինչև որ դաւառական աշխարհիկ բարբառներն և զրաբառն կորիճ երիտասարդների

զրիչներով հաւաքուին միանան ժամանակիս վորձական բոլի մէջ , ձուլովն և այն տիսկն ու պատկերն ստանան , որին որ վասիաքում է աղղի ըսթավութեան հողին և կարօտիւ որոնում :

Այսպիսի դործունէ տթեան ասպարէզ կայ ահա ձեր առաջին բացուած , Հայկաղն մանկոնք , Նախախնամութիւնը և ազգը այժմ ձեղնն պարտաւորում , որ եռանգուն սիրով , հայրենասէր յօժարութեամբ , անխարդախ պատկառանօք լնթերցասիրէք մեր նախնեաց մատենապրութիւններն , հասկանաք նրանց արտաքին յօրինուածքը և ներքին հողին , նրանց ոլորուն և աղղու գարձուածներն , նրանց կախարդիչ , սակաւախօս և մեծիմաստ ելեջներն , նա և նրանց խրթին և զժուարիմաց մոքերն : Զեղէ պարտաւորում ժամանակը և ազգի բարերաստիկ ապաղայի սէրը , որ առանց անհոգութեան , առանց սառնութեան և ծաղրածութեան հետամուռ լինիք դաւառական բարբառներին և խորամուխ լինիք նրանց փոխխռութիւններին և օտարածնութիւններին , որ կաենէք մեր խեղճ տղի կենաց բոլոր պատկերն և քաշածներն - գերութիւնն , բռնութիւնն , օտարութիւնն , պանդիստութիւնն , հաղածանք , փոխխռութիւնն վարուց , բարուց , սովորութեանց և խօսակցութեանց , բայց միանդամայն կտեսնէք օտարականութեան ճանկերց ազատուած և մաքուր մնացած լնտիր բառեր և վայելուչ ձեւը , որոնք շատ գեղեցկութիւն պէտք է տան մեր լեզուի ներկայ կաղմութեանը :

Սակայն խմացէք , որ գրաբառն պետք է լինի ձեզ առաջնորդ անսայթաք ախորժակաւ լնտրել բարին և կատարեալն աշխարհաբարի մէջ : Մինչեւ հողին չլնտելամայ , մինչեւ ձեր ականջներումը չքաղցրանայ դրաբանի մոզմահնչիւնն և քաղցրալուր ձայնը , չէք կարող ընտրութիւնն առնել աշխարհիկ բարբառների գարձուածների և բառերի մէջ : Առանց գրաբառեզրին սակաւմն և սարսափ կգայ ձեզ վրայ , և չէք կարող ձեր սեփականը ճանաչել տեսանելով՝ թէ մեր ազգի նման մի փոքրաթիւ աղդ (որոյ մի մասն ևս մոռացած են իրանց լեզուն ) քանի քանի բարբառներ է ձեայրի ամեն տեղ , ամեն երկրում օտար բառեր լնտրունելով և խօսուածքներ :

Բայց զրաբառ լեզու ասելով չկարծէք թէ մի դժուարամատչիլի իրաւունք է և մի կախարդական կամուրջ , որ անմերձնապի և անսանցանելի լինի մարդու համար , ոչ , մատան Հայկազունք , շատ դիւրին է նա հասկանալու

ոչ թէ միայն մեր ազգայնոց համար, այլ նաև և հայերէնասէր օտարազգիների, մանաւանդ այս ժամանակում, երբոք հեշտանում էն դասական եղանակներն, զգարի է լինում բանականութեամբ և մտաց գրգծունէտթեամբ ուսանողութիւնն քանի թէ խարազանաւ և հալումաշ սերտողութիւններով : Նա անհասկանալի և զժուարիմաց է միայն նրանց համար, որոնք անընթերցանէն, անհայերէնասէր են, օտարասէր են և չունին փափաք և աղջայն եռանդ կարդալու հալածանքից, որից ու կրակից ազատուած և իրբն թանկադին աւանդ և պանդխոսութեան քաղցր բեռն յերկրէ երկիր սարսաւած՝ իրանց զրականութեան մնացրդնելն և զարեցդար ժամանակի ձեռքից արտապրութեամբ խղուած քրիստոնէական զգացմանց և պատմական հմտութեանց յիշատակարաններն : Սառնութիւնն, արհամորհանքն և մանաշխատասիրութիւնն ամենասպազմի և ամենասպեղցիկ բան անդամ զըդուելի կարող են շինել մարդուս համար և անսանելի : Բայց սառնութեան և անշանասիրութեան ժամանակ չէ, չայլենակից մանկունք, այլ երկպատիկ աշխատասիրութեան երկպատիկ աշալընութեան և մոքաման :

Յառաջ զնացած ազգերին նայերին՝ քիլսոն պէտք է թափենք և մենք յառաջ գնալու, բայց միանգամայն պէտք է և մի կորեկից հայեցուածք ձգելով մեր անցեալի վրայ՝ որոնենք ինչոր կորցրել ենք : Զեռն պէտք է մինենք ազգաշխոսութեան, բայց նիւթերն հնութեան աւերակներից և մնացրդներից պէտք է ժողով ենք : Պատերազմների և մաքառմունքների պէտք է ընդդիմանանք, բայց ոչ թէ դէմ յանդիման յայտնի զրահաւորուած թշնամիների, այլ զարտոնի որերի, ծածուկ հրձութիւնների և զողունի վէրքերի, որոնց համար հմտութիւնն է հարկաւոր և զդաշուութիւն : Պէտք է իմանալք, որ մեր ազգն զարաւոր ժամանակներից յետէ պատերազմներ է ունեցել, ոչ թէ երկիրներ նուաճելու, ոչ թէ ազգեր կործանելու, ոչ թէ տէրութիւններ կլանելու, ոչ, այլ իրան քրիստոնէական մայրենի Եկեղեցին և ազգայնութիւնն անկախ պահպանելու + այս յարատե պատերազմն ունեցել է ոչ թէ միմիկայն մի ազգի, մի տէրութեան կամ թագաւորի հետ, ոչ, այլ աշխարհքիս բոլոր ազգերի և տէրութիւնների հետ, որ և ինքն գտանուել է իրան սկանդալութեամբ : Նոյն օրինակ պատերազմներ և մրցունքներ կան նաև մեր առաջին, որոնց ընդդիմանալ և յաղթել կարող ենք միայն մեր Եկեղեցւոյ աղաստական սիրով, մեր առաքինի հայրենասկառ-

թեամբ և ազգային լեզուի մշակութեամբ, յաղթութեամն պատկ ստանդաով  
 մեր ազդի յարատե կենդամութիւնն և բարոյական յասաջաղիմութիւնն :  
 Եւ չլարծէք թէ հալածանքներն, պատելազմոնքներն և գերութիւններն  
 մեր ազդի համար մի թշուառ ճակատագիրի է և ասլաբաղդութեամն նշան, ոչ  
 բնաւ, հալածանքը և նեղութիւններն մեզ համար այն երկնային ամուերն  
 են, որոնց մէջից մեր ազդը մղուելով փոթորիկներից և մրրիկներից  
 անձրեսի վճիռ կաթիկների նման՝ մաղուել և սլարդուել է մինչև մեր ժա-  
 մանակներն անկախ պահպանելով իրան ազգային էութիւնը : Մեր նախ-  
 նիքները հալածանաց ժամանակ շատ բան են շնորհ և առաւել անմահ  
 մեծագործութիւններ են արել, քան թէ մենք մեր խալազութեան ժամա-  
 նակ: Հալածանքը նրանց արթուն է պահպանել, բայց զուցէ հանդսուու-  
 թիմը անհողութեան բարձի վրայէ դրել մեր զղուիմն՝ մեր աշալլջու-  
 թիւնն թմբեցնելով: Հետախուզեցէք միանդամայն մեր նախնեաց զրա-  
 ւոր վաստակներն, կրօնասիրական ու հայրենասիրական հողին և մեր ժա-  
 մանակների անտարերսութիւններն և օտարականութեամբ վարակուիլն  
 և կտեսնեք ասածներիս ասլացոյցներն: Նկատեցէք և իմաստ առէք նը-  
 րանց քրտնաշան աշխատութիւններն և հեղահամբոյը հոդին, որոնք ա-  
 ռանց տպալլական հեշտութեան, առանց զրելու նիւթերի առասուու-  
 թեան, հագուազիւտ մազալաթներն իրանց թղթի դործարան շինելով՝ ի-  
 րանց զրիչներն տպալլական մասուներ և իրանց խուցելն տպարաններ՝  
 աչքեր ու կեանք դոհելով, անբաւ թարգմանութիւններ, մեկնութիւններ,  
 պատմաբանական յիշատակարաններ և այլ բիւրաւոր վաստակներ են  
 որպեսոց որդի աւանդել, որոնք որչափ և հրոյ ու սրոյ, աւերածների ու  
 գերութեան ճարակ են դասել, այնու ամենայնիւ այնչափ հասել են մեզ,  
 որ այս ամէն բանի դիւրութեան դարումը մեր աշխատածներից բիւրա-  
 ւոր անգամաւելի են: Բայց մենք չկէտք է ապերախտ դանուենք նը-  
 րանց սիրագործութեանց առաջն պէտք է զգանք, որ այն ազդի մեծ  
 բարերարներն, որոնց անուններն կարդում ենք պատմութեան մէջ և  
 որոնց արարքն մեզ զարմացնում է, նրանք բոլորն աշխատել են մեզ հա-  
 մար + մենք մտել ենք նրանց ժառանգութեան մէջ և ոտք ենք կոփել այն  
 ժանապարհի վրայ, որ նոտիրական է նրանց ընթացքով: Պէտք է իմա-  
 նունք անշուշտ, որ ար նրանք կանդնել են, մենք պէտք սկսենք, որ

Նրանք հիմք են ձղել, մենք պէտք է բարձրացնենք և մեր յետադայիցն առանդենք ի կառար հասուցանելու աղջայնութեան այն հրաշալի տաճարն, որոյ անվեան քարերի վրայ արխին և քրտինք են թաղիմել մեր նախահայրերն: Մանենք այսպէս նրանց ժառանգութեան մէջ, յորդոց որդի տանդենք աղջի յարատնութեան և պայծառապարզութեան կուսկն և այնուհետեւ մեր Աղջն կամ Եկեղեցին իրեւ հինօրեայ արձան, իրեւ ամենակերպ անցքերով քանդակած կոթող, իրեւ քրիստոնէական կենաց պատկեր՝ համարձակ կարող է բարձրացնել իրան աշխարհառես զլուին և աներկիւդ աղաղակել: « յորդահոսան հեղեղներ, բաղմածուկ աղիքներ, հալածանաց շանթեր, խորամանկութեանց դադոնի մուրճեր, յուղեցէք, բորբոքեցէք, թափեցէք ձեր զօրութիւնը, ձեր կառապութիւնը և կործանմոնքը, ես կենդանի եմ ու յաւերժ անասան տիեզերաց աւելակների մէջ իմ աղատ Կրօնքով և Նահատակներիս արեամբ, : :

ՅԱՆԿ ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀՐԵԱ

Վաստենք բանի	—	1
Առաջին աղդ բառից ԱՆՈՒԽՆ	—	2
Պարագայք անուանց	—	2
Հոլովմունք Ա. Բ. Գ. Գ. Ե. Զ. Է. Ը.	—	5—9
Արտուրի հոլովմունք	—	9
Բայաստմթիւններ	—	11
Միջակ անուանք	—	12
Երկրորդ աղդ բառից ԴԵՐԱՆՈՒԽՆ	—	14
Հոլովմունք զոյական դերանունների	—	15
Հոլովմունք ածական դերանունների	—	16
Երկրորդ աղդ բառից ԲԱՅՑ	—	17
Պարագայք բայի	—	18
Պարու օրինակ Է. Լ ՃՈՐԴՈՒԹԵԱՆ	—	20
Պարու օրինակ Է. Լ ՃՈՐԴՈՒԹԵԱՆ	—	21
Պարու օրինակ առ Լ ՃՈՐԴՈՒԹԵԱՆ	—	22
Պարու օրինակ առ Լ ՃՈՐԴՈՒԹԵԱՆ	—	24
Խառն խռնաբհմունք Է. Լ ՃՈՐԴՈՒԹԵԱՆ	—	26
Արտուրի բայեր	—	29
Եական բայք	—	38
Զոլորորդ աղդ բառից ԲԱՅՑԱՆՈՒԽՆ	—	39
Հինգերորդ աղդ բառից ՆԱԽԱԴՐՈՒԹԵԻԽՆ	—	40
Վեցերորդ աղդ բառից ՄԱԿԲԱՅ	—	45
Եօթներորդ աղդ բառից ՇԱԿԱԿԱՊ	—	46
Ութերորդ աղդ բառից ԶԱՅՆԱՐԿՈՒԹԵԻԽՆ	—	46

## ՄԱՍԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ԵՐԿՐ

Համաձայնութիւն մասսանց բանի	—	49
Բայ և Անուն կամ Տէր բայի	—	50
Խնդիր բայի	—	52
Խնդիր էական բայից	—	53
Միադէմ բայք	—	54
Խնդիր բնութեան	—	55
Խնդիր անուանց	—	58
Յատկացուցիչ և Յատկացւալ	—	60
Բացայացտիչ և Բացայացտեալ	—	61
Համաձայնութիւն ածական անուանց	—	62
Միջակ անուններն զոյական անունների հետ	—	64
Ածական դերանուններն զոյական անուանց հետ	—	66
ԱՅ յալաբերեալ դերանուան վրայ	—	67
ԱՅ ԴԻ ՆԻ Դիմորոշ յօդերի վրայ	—	68
ԱԽԱՋԱԳՐՈՒԹԻՒՆ	—	69
Յորդորական խօսք առ Հայկակուն մանկուն	—	73

## ԳԼՈՒԽԱԿՐ սիստեմք

ԵՐԵՐԸ	ՏՎԱՐ	ՓԵԿԱԿԱՆՔՆԵՐԸ	ԼԱՐԱԿԱՎՄԱՆ
5 —	10*	Էղ	Էջ
54 —	28*	Հաւասարակըս	Հայտակըս
55 —	16*	ի վարայ	ի վերայ
56 —	24*	նախդրիս	աննախդրիս
58 —	3*	շինութիւն	շինութեան

Խակ միւս մանր սիսակներն խնդրում ենք դաստիարակներից, որ իրանք տպդին :





2930  
2013

